

մշտնջենաւոր հարսանեացմէ վերջը պիտի պաշտենք, երբ մէկ սիրտ և մէկ կամք ըլլանք յաւիտեանս յաւիտենից : Ատքը աչուրները Աուբէնին դարձընելով, ուր աստուածեղէն լոյս կը փայլէր, թէպէտ արտասուօք ուռգեալ, զոր բնութիւնը ակամայ կը խլէր անկէ, ըսաւ :

— Աուբէն, կ'ուզե՞ս որ քու երկնաւոր հարսդ ըլլամ :

— Ա՛յ, պուռաց Աուբէն ծունկի վրայ իյնալով, ես յաւիտեանս յաւիտենից քուկդ եմ. սիրտս բաց 'ի քու սիրոյդ ուրիշ սէր պիտի չունենայ :

— Յաւիտեանս յաւիտենից, կրկնեց Մարիամ, տկար բայց որոշ ու պայծառ ձայնով մը :

Այս ինքն սկսաւ աղօթել մինչ քահանան սրբազան հանդէսը կատարելու կը պատրաստուէր :

Բոլորովին յափշտակուած, աչուրները երկինք վերացուցած, ձեռուրները կուրծքին վրայ դրած, անշարժ անորոշ ձայնով բան մը կը մրմնջէր :

Այբոր Աստուծոյ պաշտօնեայն այն խօսքերն ըսաւ, որով զինքը Աուբէնի կը հարսնացընէր, պուռաց Մարիամ :

— Ա՛յ իմ հոգւոյս անձկալի փեսայդ, ընդունէ իմ շրթունքներէս մեր երկնաւոր հարսանեաց ողջախոհ համբոյրը, և մի մոռնար երկրիս վրայ զանիկայ, որ կ'երթայ երկինքը քեզի սպասելու :

Աուբէն, մայր իմ, ահա ես կը մեռնիմ, մեծարելով զձեզ, և անչափ սիրով մը սպառուելով : Ա՛նաք բարով :

Պիւտէ գրագէտը որ մը երբոր սաստիկ զբաղած իր գրաւորական աշխատութեանց մէջ առանձնացած էր իրեն ուսումնարանը, յանկարծակի ծառաներէն մէկը սարսափած վազելով մտաւ իր խուցը, ու իմացուց որ տան մէջ կրակ կայ : Պիւտէ առանց ամենեին այլայլելու պատասխան տուաւ անոր. « Գնա կնկանս իմաց տուր. չե՞ս գիտեր որ տան ներքին կառավարութեանը ես չեմ խառնուիր » :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Դատաստան և պատիժք Սիամի մէջ :

Թէ որ քանի մը եւրոպացի հեղինակներու խօսքին հաւտալ ուզենք նէ, Սիամի պետութեան մէջ թագաւորը անձամբ կը դատէ ամէն դատաստան. իր հետը ունի միշտ 4,000 դահիճ, որ իրեն անձնապահապետի տեղ կը ծառայեն. ոչ ոք կրնայ իր տուած խիստ պատիժներէն ազատիլ : Սովորական պատիժ է քիչ խօսողին բերանը ինչուան ականջներուն քով ձղքել, ու շատ խօսողինն ալ կտրել. ամենաթեթեւ յանցանքներու համար մարդուն սրունքը կը կտրեն, թւերը կարմրցած երկաթով կ'այրեն, գլուխը սրով կը հարուածեն, բոլոր ակռաները կը հանեն : Վրէթէ բան մըն ալ բրած չըլլաս, գունէ գաւազանով կը ծեծեն, կամ բայ գլխով սաստիկ արեւու մէջ կը թողուն, ինչպէս նաև մատերուն կը զարնեն գաւազանաւ, ու ըղունգները բոլորովին արմատէն կը կտրեն. անանկ որ հոն մարդ չգտնուիր, որ կեանքին մէջ քանի մը անգամ աս պատիժներէս մէկ քանին չքաշէ :

ք ն ա կ ա ն

ՕԳՏԱԿԱՐ ԳԻԻՏԵՐ

Հոս միս պահելու նոր կերպ :

Անցեալ տարւոյն վերջերը Տիւսուս անունով գաղղիացի բժիշկը հուճ միսն երկար ատեն պահելու նոր կերպ մը հրատարակեց, և է՛ պահելիք միսը շաքարի շարապի՝ մէջ թաթխել :

« Աս կ'ըսէ 1847ին մարտի 9էն ինչուան հիմա պահուած հուճ միս ունիմ,